




Գայլերի հարձակում

2

6



Անտիուտոպիա Բոլոր դռները

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը Այն ընդ ական

7



ով իրազեկված է, նա տաշտոյանված է

արտակարգ թերթ

N 43 (268)

28.11.2008 - 4.12.2008

www.emergency.am

Իրազեկվածության եւ փրկության կոնֆերանս



Նոյեմբերի 26-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության եւ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի նախաձեռնությամբ անցկացված «Սպիտակի երկրաշարժի դասերն ու հանրային իրազեկման հիմնախնդիրները» թեմայով միջազգային կոնֆերանսին մասնակցում էին ՀՀ կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ, Ազգային ժողովի հանձնաժողովների նախագահներ, դեսպաններ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, կառավարման մարմինների եւ այլ կազմակերպությունների լրատվության պատասխանատուներ, ՀԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀՀ բուհերի ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողներ:

Մինչ ելույթներին անցնելը, մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին Սպիտակի երկրաշարժի եւ ընդհանրապես աշխարհի բոլոր կողմերում տեղի ունեցած աղետների զոհերի հիշատակը:

Սպիտակի երկրաշարժը եւ օրավոր ահազանցող աղետները բերել են հանդուսի, որ արհավիրքների դեմ միայնակ պայքարելն անհնար է: 1988-ի երկրաշարժը ցնցել էր միջազգային հանրությանը: Այն ստիպեց բոլորին շատ հարցերի շուրջ մտորել, նույնիսկ միջազգային փրկարարական միավորումը՝ ԻՆՍԱՐԱՊ, ստեղծվեց Սպիտակի աղետից հետո:

Կոնֆերանսի ժամանակ հերթով խոսվեց բոլոր այն դասերի մասին, որ մեզ տվեց Սպիտակի երկրաշարժը, մանրամասն քննվեցին բոլոր սխալներն ու բացթողումները, ցուցադրվեց այդ թեմայով պատրաստված ֆիլմ:

Սպիտակի դասերի յուրացված լինելու լավագույն ասպարեզը՝ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի ստեղծումն է, - իրենց ելույթներում նշեցին կոնֆերանսի մասնակիցները:

Ռոո՞նք էին Սպիտակի երկրաշարժի հիմնական դասերը: 1988-ի երկրաշարժն ասպարեզեց, որ թե Հայաստանը, թե Խորհրդային միության մյուս հանրապետությունները պատրաստ չէին նմանատիպ աղետի: Փրկարարական համակարգ չկար, փոխարենը գործում էին քաղաքաշտպանության ուժերը: Վերջիններիս «առաքելությունն» էլ սահմանափակվում էր «լայն զանգվածներին» պատեհազանական իրավիճակներին նախապատրաստելով միայն: Եզրամասային կառավարման համակարգ գոյություն չուներ,

չկային պրոֆեսիոնալ ու բազմապրոֆիլ փրկարարներ: Երկրաշարժին հաջորդած առաջին «24 ուկե ժամից» մի քանի 24 ժամ էլ անցավ, մինչեւ արտասահմանցի փրկարարները հասան, բայց օգնության կարիք ունեցողների թիվը երկրաչափական պրոգրեսիայով նվազել էր:

Կոպիտ սխալ էր թույլ տրված, երկրի սեյսմիկ վտանգը գնահատված էր 7-8 բալլ, բայց 1988 թվականի արհավիրքը ցույց տվեց՝ Հայաստանում հնարավոր են 10 բալանոց երկրաշարժեր:

Հաջորդ սխալը շենքերի եւ կառույցների նախագծային թերություններն էին: Կոպիտ բացթողում էր նաեւ սեյսմակայուն շինարարության չափանիշների ու կանոնների անտեսումը: Շինարարության համար օգտագործված էր անորակ շինանյութ: Շենքերը կառուցելիս հաշվի չէին առել նաեւ երկրաշարժի ժամանակ ուղղաձիգ տատանումների ազդեցությունը, քանի որ կարծում էին, թե կառույցները կարող են փլվել միայն հորիզոնական տատանումներից, այնինչ պարզվեց՝ ուղղաձիգներն ավելի վտանգավոր են:

>>> 4

Տեղեկատվական ահաբեկություն, թե՛ անիրազեկի իրարանցում

Վերջին շրջանում շարունակվում են համառոտն ու պարբերաբար տարածվել լուրեր իբր սպասվող ավերիչ երկրաշարժի մասին: Կրկնում ու շեշտում ենք՝ ԻԲՐ, քանի որ, ցավոք, մինչ օրս, որքան էլ գիտությունը տքնում է, չի կարողանում կանխատեսել երկրաշարժերը գոնե մի քանի ամսվա ճշգրտությամբ:

Ի դեպ, մեկ անգամ նման հաջող փորձ արվել է՝ Չինաստանում: Այս թեմայով հետաքրքրվողներին համառոտ պատմենք այդ պատմությունը: Բնակչությանը 25 անգամ, այդ, 25 անգամ ազդարարել են սպասվող երկրաշարժի վերաբերյալ, սակայն, 25 անգամ էլ երկրակեղևը մնացել է անասան: Համառ գիտնականների 26-րդ փորձը պատկվել է հաջողությամբ: Օրինապաշտ քաղաքացիները, իշխանությունների խոսքը չանտեսելով՝ լքել են իրենց բնակատեղիները: Հրաշք, զոհեր գրեթե չեն գրանցվել: Սակայն, սրանից մեկ տարի անց, նույն տեղում նույն ուժգնության երկրաշարժը, ցավոք, այլևս կանխատեսվածներից չէր:

Հարյուր հազարավոր զոհեր՝ դրա վառ վկայությունն են:

Վերադառնանք, սակայն, մեր իրականությանը: Այդ վայ-կանխատեսողներին պարզապես հիշեցնենք մի քանի առաջ տարի գրանցված բարձր բալանության խուճապը, որ նկատվեց մայրաքաղաքում ու մոտակա բնակավայրերում: Մեջքերենք այդ օրերին հենց մեր տպագրած հոդվածից մի հատված: Հոդվածն այդպես էլ վերնագրված էր. «Թե ինչպես բարձր բալանության խուճապը ցնցեց մայրաքաղաքը»:

«Առաջին անգամ չէր, որ սպասվող իբր աշխարհակործան երկրաշարժի մասին լուրեր էին տարածվում: Մեկ էլ տեսար, լուր եկավ, թե Ավանի բարձրահարկ շենքերից մեկն է մտել մի մարդ, տարածել թռուցիկներ՝ իբր շուտով երկրաշարժ է լինելու, լքեք ձեր տները: Վատ կանխատեսումները սիրահոժար ընկալող մեր քաղաքացիներից շատերն էին տրվում նման սադրանքների, նույնիսկ զանգահարում ԱՎԿ, սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն, հարցնում

ճի՞շտ են լուրերը: Իսկ երբ հարցնում էինք՝ ի՞նչ տեսակի մարդ էր, նկարագրում էին ու վերջում անփոփում. ոնց որ մի քիչ շեղված լինեք: Շեղված, թե խեղված, հիվանդ, թե՛ հանցագործ, էականն այդ չէր. մարդիկ այնուամենայնիվ, կամ, համեմայն դեպս, առժամանակ լքում էին իրենց տները, չնայած երդում-կոտոր էինք լինում, որ նման գիտական կանխատեսում չկա, ու ցավոք, գիտությունը դեռ չի հասել այդ մակարդակին, որ լինի:

Նման դեպքերը, մեկ Ավանում, մեկ Երեբունու կամ Նոր Նորքի զանգվածներում, այլուր, սովորաբար կրում էին, այսպես ասած՝ լոկալ, տեղային բնույթ, որոնց թեթեւ «կոհակները» բախվելով սթափության կոչերին՝ մարում էին: Սակայն այն, ինչ եղավ այս շաբաթ, երկուշաբթի օրը, նույնիսկ 8-ին, գերազանցեց բոլոր սպասելիքները: Նույն ԱՎԿ-ի, հատկապես նրա սեյսմիկ ծառայության հեռախոսները հազիվ դիմացան լարվածությունը:

>>> 5

«Էլիտ գրուպ» առաջարկում է կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitigroup.am; URL: www.elitigroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլևս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպ» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Ավտոպատահարներ

Նոյեմբերի 22-ին ահագանգ է ստացվել, որ Թալինի մերձակայքում ավտոմեքենա է շրջվել ձորը, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Տեղում պարզվել է, որ «ԳԱԶ-24» մակնիշի 10 ՍՕ 364 պետհամարանիշով ավտոմեքենան Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 65-րդ կմ-ում դուրս է եկել երթուղուց մասից ու շրջվել ձորը: Տեղի ուժերով ավտոմեքենայից դուրս է բերվել չորս տուժած, իսկ դեպքի վայր մեկնած փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել վարորդին ու եւս մեկ ուղեւորի:

Տուժածները տեղափոխվել են Թալինի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը գնահատվում է բավարար:

Նոյեմբերի 23-ին Երեւանի Ծովակալ Իսակովի պողոտայում գտնվող ԱՄՍ-ի դեսպանա-

տան դիմաց «ՎԱԶ-2107» մակնիշի ՕԵ 273 պետհամարանիշով ավտոմեքենա դուրս է եկել երթուղուց մասից եւ բախվել էլեկտրասյանը:

Դեպքի վայր մեկնած փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել մոտ 40 տարեկան երկու տղամարդու դիակ, իսկ ավտոմեքենայի վարորդն ու մեկ ուղեւոր, տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Երեւանի» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը միջին ծանրության է:

Նոյեմբերի 23-ին Երեւան-Սեւան ավտոճանապարհին՝ «Ախթամար» հուշարձանի մոտ, դեռեւս չչարզված հանգամանքներում, «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա դուրս է եկել ճանապարհի երթուղուց մասից եւ շրջվել, ինչի հետեւանքով Գեղարքունիքի մարզի Սենյոնովկա գյուղի գյուղապետ, 1974 թ. ծնված Արամայիս Վարդանյանը տեղում զոհվել է, իսկ 1958 թ. ծնված Զրաչիկ Խանգադյանը եւ 1968 թ. ծնված Կարեն Դուկասյանը տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Սեւանի հիվանդանոց:

Նոյեմբերի 26-ին Արագածոտնի մարզի Ուշի գյուղի մոտ

տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Պարզվել է, որ շրջադարձի ժամանակ շուռ է եկել «ԴԱՎ-95360» մակնիշի ԱԼԻ 169 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան:

Տեղի ուժերով ավտոմեքենայից դուրս են բերվել վարորդն ու ուղեւորը, երկուսն էլ վրաստանի քաղաքացի:

Տուժածները տեղափոխվել են Աշտարակի հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը ծանր է:

Պայթուցիկ սարք չի հայտնաբերվել

Նոյեմբերի 20-ին, ժամը 13.27-ին ոստիկանության հերթապահից տեղեկություն է ստացվել, որ Երեւանի ՊՃԳ-ի քիմիական ֆակուլտետի մասնաշենքում պայթուցիկ սարք է տեղադրված:

Դեպքի վայր են մեկնել ԶԳ ազգային անվտանգության, պաշտպանության նախարարության եւ փրկարար ծառայության օպերատիվ խմբերը:

Ձննման արդյունքում պայթուցիկ սարք չի հայտնաբերվել:

Գետի գույնը փոխվել է

Նոյեմբերի 23-ին ահագանգ է ստացվել, որ Փամբակ գետի գույնը ստացել է կարմրավուն երանգ:

Դեպքի վայր են մեկնել Լուռու մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը եւ ԶԳ բնապահպանության նախարարության մարզային բնապահպանական պետական տեսչության աշխատակիցները: Գետից վերցվել են փոր-



Ճանուղներ եւ ուղարկվել հետազոտության:

Փակ դռան հեքելում

Նոյեմբերի 23-ին, ժամը 12.34-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Փափազյան փողոցի 22 շենքի 44-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան գանգերին, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները, ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ բացել են բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է անօգնական վիճակում գտնվող, 1927 թ. ծնված Ռոզա Ավոյանը:

Տուժածը հանձնվել է «1-03» ծառայության աշխատակիցներին:

Ալկոհոլային թունավորում

Նոյեմբերի 22-ին ալկոհոլային թունավորումով վանածորի «Նարեկ» մանկական հիվանդանոց է տեղափոխվել վանածորի բնակիչ՝ 1991 թ. ծնված Պետրոս Մաղոյանը, որը ստանալով առաջին բուժօգնություն՝ դուրս է գրվել հիվանդանոցից:

Գտել են անտառում

Նոյեմբերի 19-ին Զրազդանի Աթարեկյան թաղամասի բնակիչ Գ. Նավասարդյանից ահա-

գանգ է ստացվել, որ նոյեմբերի 18-ին, ժամը 11.30-ի սահմաններում, 1935 թ. ծնված Վարուժան Նավասարդյանը դուրս է եկել տնից եւ չի վերադարձել:

Նոյեմբերի 20-ին սկսվել են որոնողական աշխատանքները: Միայն 4 օր անց՝ նոյեմբերի 24-ին, Զրազդանի Մաքրավան թաղամասին հարակից անտառում հայտնաբերվել է Վ. Նավասարդյանի դին:

Գայլերի հարձակում



Նոյեմբերի 24-ին Գեղարքունիքի մարզի Կարմիր գյուղի բնակիչ Ա. Ավդալյանից տեղեկություն է ստացվել, որ նոյեմբերի 21-ին, ժամը 05.00-ի սահմաններում գայլերը հոշոտել են տան բակում կապած ծիւնը:

Դիակի հայտնաբերում

Նոյեմբերի 25-ին «Մանկավարժ վետերանների» ակումբից ահագանգ է ստացվել, որ իրենց ակումբի անդամ, Երեւանի Նոր Նորքի 6-րդ զանգվածի 6 շենքի 13-րդ տան բնակիչ Թամարա Գալստյանը 40-45 օր է չի արձագանքում հեռախոսի եւ դռան գանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները նշված հասցեում հայտնաբերել են 80-85 տարեկան Թ. Գալստյանի դին: >>> 3

Սիջազգային լուրեր

Զիմբաբվեում խուլերայի համաճարակ է

Զիմբաբվեի իշխանությունները փորձում են թաքցնել երկրում տարածվող խուլերայի համաճարակը: Հիվանդության տարածման պատճառ են դարձել քաղաքների փողոցներում թափված աղբի կույտերը եւ մաքուր ջրի պակասը:



Միայն անցյալ շաբաթ խուլերայով վարակվել է վեց հազար եւ զոհվել 300՝ մարդ: Ռիսկի խմբում է եւս 1,4 միլիոն բնակչություն: Զիմբաբվեի առողջապահության նախարարությունը հայտարարել է, որ անգոր է վերահսկել համաճարակը, քանի դեռ երկրում չկա բավարար քանակով մաքուր ջուր:

Փլվել է դպրոցի տանիքը

Նոյեմբերի 22-ին Իտալիայի Ռիվոլի քաղաքում փլվել է դպրոցներից մեկի տանիքը: Պատահարի զոհ է դարձել 18-ամյա մի պատանի, եւս 20 դպրոցական ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ: Տուժած երեխաներից երեքը ծայրահեղ ծանր վիճակում են:

Դեպքի վայրում աշխատող իրշեջ ծառայության մասնագետները հայտարարել են, որ փլուզման պատճառ էր դարձել շինարարական նորմերի խախտումը եւ ոչ թե փոթորկային քամին, ինչպես ենթադրվում էր:

Հայտնի է, որ Իտալիայի դպրոցների մոտ 75 տոկոսն անմխիթար վիճակում է:

Բրազիլիան հեղեղվել է

Բրազիլիայում տեղատարափ անձրեւների հետեւանքով զոհվել է առնվազն 79 մարդ, եւս 30-ը համարվում են



անհետ կորած: Ինչպես հայտնել է փրկարար ծառայությունը, տարերքը հարձակվել է Սանտա Կատարինա նահանգի վրա, որտեղ անօթեւան է մնացել մոտ 54 հազար մարդ:

Նահանգի տարածքում իրականացվում են վերականգնողական աշխատանքներ:

Երկրաշարժից տուժածները՝ մեքսիկոյի վագոններում

Մայիս ամսին ուժեղ երկրաշարժից տուժած Չինաստանի Սիչուան նահանգում

անտուն մնացած մի քանի հազար ուսանողի բնակեցնում են մետրոյի վագոններում:

Հիշեցնենք, որ աղետը տեղի էր ունեցել մայիսի 12-ին. ստորգետնյա ցնցումները փլուզել էին մոտ երեք միլիոն բնակելի տուն, իսկ ավելի քան 14 միլիոն շինություն վնասվել էր:

Անօթեւան դարձած ուսանողներին կացարանով ապահովելու համար Պեկինի մետրոպոլիտենը հատկացրել է մետրոյի 60 ազատ վագոն:

Ստորգետնյա տարերքից տուժածներին ժամանակավոր կացարան հատկացնելու խնդիրը մոտեցող ձմռան հետ հրատապ է դարձել:

Ահաբեկությունների ալիք Հնդկաստանում

Նոյեմբերի 26-ին Հնդկաստանի ֆինանսական մայրաքաղաք Մումբայում ահաբեկչական գործողությունների շարք է գրանցվել: Հանցագործները կրակահերթի են ենթարկել մի քանի թանկարժեք հյուրանոց, որտեղ հիմնականում իջեւանում են օտարերկրացիներ եւ զբոսաշրջիկներ: Չարագործների թիրախ են դարձել նաեւ կայարաններ,

ռեստորաններ եւ հիվանդանոցներ:

Պայթյունների եւ կրակահերթի հետեւանքով զոհվել է ավելի քան 100 մարդ, 300-ը ստացել են մարմնական տարբեր վնասվածքներ:



Ահաբեկիչները նաեւ պատանդ են վերցրել երկու հյուրանոցներում գտնվող մարդկանց: Կատարվածի պատասխանատվությունն իր վրա է վերցրել «Դեկկան Մուդջահիդին» կազմակերպությունը: Ենթադրվում է, որ ահաբեկչական նույն կազմակերպությունն այս տարվա մայիսին Չայպուր քաղաքում տեղի ունեցած ահաբեկչական գործողության հեղինակն է:

Ֆախմա Թյունիբաբյան



<<< 2 Հրդեհներ

Տնակն ու գույքը

Նոյեմբերի 20-ին Վանաձորի Ա. Շիրակացու փողոցի 1-ին նրբանցքի 4/1 տանը հարակից տարածքում բռնկված հրդեհի հետևանքով այրվել են Ս. Մինասյանին պատկանող 21 քմ մակերեսով բնակելի տնակը եւ գույքը:

Նոյեմբերի 22-ին Երեւան-Սեւան ավտոճանապարհի 39-րդ կմ-ում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է Վ. Խաչատրյանին պատկանող 30 քմ մակերեսով վագոն-տնակն իր գույքով:

Մեքենա

Նոյեմբերի 20-ին Արմավիրի մարզի Փարաքար գյուղում բռնկված հրդեհի հետևանքով ամբողջությամբ այրվել է Ջ. Արամյանին պատկանող «ՎԱԶ-2106» մակնիշի 10 SL 547 պետհամարանիշով ավտոմեքենան:

Նոյեմբերի 23-ին Գյումրի-Սպիտակ ավտոճանապարհին՝ Ջաջուռ գյուղին հարակից հատվածում բռնկված հրդեհի հետևանքով ամբողջությամբ այրվել է Յ. Հովհաննիսյանին պատկանող «Նիսան Արմադա» մակնիշի 80 SL 555 պետհամարանիշով ավտոմեքենան:

Տանիքածածկ

Նոյեմբերի 21-ին Եղեգնաձորի Մաշտոցի փողոցի 12 տանը բռնկված հրդեհի հետևանքով այրվել է Վարդանյանին պատկանող առանձնատան՝ 120 քմ մակերեսով տանիքածածկը:

Տանիքներ ու պահեստավորած խոփ

Նոյեմբերի 23-ին Լոռու մարզի Միխայլովկա գյուղում բռնկված հրդեհի հետևանքով այրվել են Ս. Ղարիբյանին պատկանող անասնագոմի՝ 84 քմ մակերեսով տանիքը եւ այնտեղ կուտակած 500 կգ խոտը:

Նոյեմբերի 24-ին Վարդենիս քաղաքի Խանջյան փողոցի 10 տանը բռնկված հրդեհի հետևանքով այրվել են Ս. Մինասյանին պատկանող տան՝ 30 քմ մակերեսով առաստաղը, 40 քմ մակերեսով տանիքը, մեկ պատուհան եւ դուռ, ինչպես նաեւ տան բակում պահեստավորած 150 հակախոտը:

Տանիքն ու առաստաղը

Նոյեմբերի 24-ին Տավուշի մարզի Նավուր գյուղում բռնկված հրդեհի հետևանքով այրվել են Ա. Մարդանյանին պատ-

կանող տան՝ 12 քմ մակերեսով առաստաղը եւ տանիքը:

Պայթյուն՝ առանց հրդեհի

Նոյեմբերի 24-ին, ժամը 20.22-ին ահագնազ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Շահումյան գյուղում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Գ. Սարգսյանին պատկանող տանը, բնական գազի արտահոսքի հետևանքով տեղի է ունեցել պայթյուն՝ առանց հրդեհի բռնկման, ինչի հետևանքով քանդվել է խոհանոցի՝ 3 քմ մակերեսով պատը:



Պատահարի հետևանքով 1934 թ. ծնված Գ. Սարգսյանը ստացած այրվածքներով տեղափոխվել է Արտաշատի հիվանդանոց:

Երեք պատուհան

Նոյեմբերի 25-ին հրդեհ է բռնկվել Երեւանի Բեկնազարյան փողոցի 5 հասցեում՝ թիվ 185 դպրոցում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Առաջին հարկում այրվել է երեք պատուհան:

ԼՂՀ ՓԾ Լրագրական կենտրոն

Հրդեհներ

Նոյեմբերի 20-ին Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքից 5 կմ հեռավորության վրա գտնվող խոտածածկ տարածքում այրվել է 200 քմ մակերեսով խոտ:

Նոյեմբերի 23-ին Շուշիի շրջանային հիվանդանոցի ինֆեկցիոն բաժանմունքի սենյակներից մեկում բռնկված հրդեհի հետևանքով այրվել է 15 քմ մակերեսով հատակի տախտակ:

Նույն օրը Ստեփանակերտի Մամիկոնյան 12 հասցեում բռնկված հրդեհից այրվել է չօգտագործվող ցախատուն:

Նոյեմբերի 25-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Ա. Մանուկյան 3 հասցեում: Այրվել են բազկաթոռը եւ կենցաղային իրեր:

Նաիրա Եղիազարյան

սեյսմիկ պաշտպանություն

Նոյեմբերի 20-26-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում գրանցել են 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկու թույլ երկրաշարժ: Առաջինը տեղի է ունեցել նոյեմբերի 24-ին Սպիտակ քաղաքից 9 կմ հյուսիս, երկրորդը՝ նոյեմբերի 26-ին, Աշոցք քաղաքից 19 կմ հարավ-արեւմուտք: Երկրաշարժերի ուժգնություններն էպիկենտրոնային գոտում կազմել են 3 բալ:

Տ ա ր ա ծ ա շ ր ջ ա ն ու մ . գրանցվել է 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկու թույլ երկրաշարժ: Նոյեմբերի 22-ին Ադրբեջան-Վրաստան սահմանային գոտում, Ադրբեջանի Ղազախ քաղաքից 34 կմ հյուսիս տեղի է ունեցել 3 բալանոց ստորգետնյա ցնցում: Նոյեմբերի 25-ին նույն ուժգնությամբ երկրա-

շարժ է գրանցվել Վրաստանում, Դմանիսի քաղաքից 22 կմ հյուսիս-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. գրանցվել է 6 եւ ավելի մագնիտուդով հինգ ուժեղ երկրաշարժ: Շարունակվում է սեյսմիկ ակտիվությունը խաղաղօվկիանոսյան օղակածեւ հրե գոտում: Վեց մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել նոյեմբերի 21-ին՝ Խաղաղ օվկիանոսի հարավում, Սողոմոնի կղզիների հատվածում: Հաջորդ օրը ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել խաղաղօվկիանոսյան Լուայոտե կղզիների հարավ-արեւելյան շրջանում, որն ունեցել է 6,4 մագնիտուդ: Նույն ուժով երկրաշարժ է գրանցվել Ինդոնեզիայի Սումատրա եւ Ճավա կղզիների սահմանային գոտում, որին 10 րոպե անց

հետեւել է 5,7 մագնիտուդով ուժեղ հետցնցում: Այդ օրն Ատլանտյան օվկիանոսում, Աֆրիկայի արեւելյան ափամերձ հատվածում գտնվող Լիբերիայի Հանրապետությունից 850 կմ հեռավորության վրա, տեղի է ունեցել 6,3 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Նոյեմբերի 24-ին Ռուսաստանի Կամչատկա թերակղզու Պետրոպավլովսկ քաղաքից 310 կմ հյուսիս-արեւմուտք (Օխոտի ծով) գրանցվել է 7,2 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Ստորգետնյա ցնցումները զգացվել են ճապոնական մի քանի բնակավայրերում: Նշված երկրաշարժերը ցունամի չեն առաջացրել, տուժածներ եւ ավերածություններ չկան:

ՄՊԱԾ գործակալություն

Հրատարակություն 1-03 Երևան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 3206 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 540 մարդ: Եղել է մանկական 230 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 49 երեխա: Գրանցվել են 37 մահ եւ 22 դժբախտ պատահար:

Նոյեմբերի 20
Նորքում էլեկտրահարման հետևանքով մահացել է 30-ամյա Ա. Ղազարյանը:

Նոյեմբերի 21
Արցախի 69 հասցեից կոտրվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել վրաների ենթարկված 38-ամյա Շ. Հարաթյանը:

Սարալանջի 10 հասցեում տեղի ունեցած վթարի հետևանքով ստացած տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն են տեղափոխվել 65-ամյա Ռ. Աղայանը, 31-ամյա Ա. Բոյաջյանը, 53-ամյա Ս. Պետրոսյանը եւ 40-ամյա Խ. Խաչատրյանը:

Ջորիապի 84 հասցեից որովայնի ծակած-կտրած վերքերով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել դանկահարված Տ. Կարապետյանը:

Նոյեմբերի 22
Ազատության պողոտայում տեղի ունեցած վթարից տուժել է 28-ամյա Գ. Սահակյանը, որը գլխուղեղի ցնցումով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:
Լեմինգրադյան փողոցում վրաների ենթարկված 28-ամյա Ա. Մովսիսյանը գլխուղեղի ցնցումով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:
Գազից թունավորումով Ավանի 5-րդ փողոցի 54 տնից «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն են տեղափոխվել 45-ամյա Ա. Ավագյանը, հասակակիցներ՝ 19-ամյա Ա. Ալամյանը եւ Լ. Արմենակյանը:

Նոյեմբերի 23
Նորագյուղում քիմիական նյութից թունավորվել է երեք մարդ, որոնք տեղափոխվել են «Արմենիա» բժշկական կենտրոն:

Ազատության պողոտայում տեղի ունեցած վթարից տուժած 22-ամյա Ա. Աղմինը գլխուղեղի վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

Նոյեմբերի 24
Իսահակյան 2 հասցեից թերմիկ այրվածքներով այրվածքների կենտրոն է տեղափոխվել 20-ամյա Վ. Կարապետյանը:

Նոյեմբերի 25
Ծովակալ Իսակովի պողոտայում տեղի ունեցած վթարից մահացել է 25-ամյա Գ. Դավթյանը, իսկ 25-ամյա Տ. Ասոյանը բազմաթիվ վնասվածքներով տեղափոխվել է «Մալաթիա» բժշկական կենտրոն:

Նոյեմբերի 26
Շիրակի փողոցում տեղի ունեցած վթարից վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն են տեղափոխվել 60-ամյա Գ. Մնացականյանը եւ 41-ամյա Գ. Հովսեփյանը, իսկ 12-ամյա Ա. Գեորգյանը ուղեղի ցնցումով տեղափոխվել է «Ար. Աստվածամայր» բժշկական կենտրոն:

եղանակի տեսություն

Նոյեմբերի 20-23-ը շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ՝ 1-7 մմ, Ջերմուկում՝ 11 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Տավուշում, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +17...+22, Արարատյան դաշտում՝ +14...+19, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +12...+17, լեռնային շրջաններում՝ +8...+13 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ +0...-5, Սյունիքի նախալեռներում՝ -2...-3 (Միսիանում՝ -6), Լոռիում եւ Արարատյան դաշտում՝ +1...+6 (Ստեփանավանում՝ -2), Տավուշում, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +4...+9 °C (Դիլիջանում՝ 0):

Նոյեմբերի 28-ին, 30-ից դեկտեմբերի 2-ը սպասվում է առանց տեղումների եղանակ, 29-ին

առանձին շրջաններում սպասվում են տեղումներ: Քամին հյուսիս-արեւմտյան՝ 3-8 մ/վրկ, 28-ին տեղ-տեղ ուժգնացում՝ 15-18 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 28-29-ի ցերեկները կնվազի 4-6, դեկտեմբերի 1-ի գիշերը՝ 2-4 աստիճանով:

Երեւանում սպասվում է առանց տեղումների եղանակ, 29-ին հնարավոր են թույլ տեղումներ:



Իրազեկվածության եւ փրկության կոնֆերանս

<<< 1 Սպիտակի հաջորդ դասն այն էր, որ բնակարանների ներսում իրականացվող կոնստրուկցիաների ինքնազուլու ձեւափոխությունները տխուր հետեւանքներ կարող են ունենալ: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Սպիտակի երկրաշարժի ժամանակ շենքերի 10 տոկոսը փլվել է հենց այդ փոփոխությունների պատճառով:

Շենքերի շահագործման կանոնները նույնպես խախտված էին: Մարդիկ չգիտեին, որ ծանր իրերը վերելում տեղադրելը սխալ է:

Կոնֆերանսի մասնակիցները խոսեցին այս բոլոր դասերի մասին ու եւս մեկ անգամ փաստեցին, որ արտակարգ իրավիճակների պայմաններում ամենակարեւորը իրազեկված լինելն է, քանի որ մարդկանց չինացությունն ավելի վատ հետեւանքների է հանգեցնում, քան ինքը՝ աղետը:



Արտակարգ իրավիճակների նախարար Միքայիլ Շահգեղյանի խոսքով՝ հանրային իրազեկման գործին լծված «Արտակարգ ալիքը» նախարարության ռազմավարության գլխավոր բաղադրարարներից է: «Պատահական չէ, որ մեր կարգախոսն է՝ «Ով իրազեկված է, նա պաշտպանված է»:

ՀՀ սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայության տնօ-



րեն Սերգեյ Նազարեթյանն իր ելույթում նշեց, որ «Արտակարգ ալիքը» իսկապես մեծ հնարավորություններ ունի մարդկանց պատրաստելու եւ իրազեկելու գործում, եւ որ մոդելը կարող է օրինակ ծառայել մյուս երկրների համար:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ «Արտակարգ ալիքի» միջազգային գործընկերները:

Կենտրոնի նոր եւ կարեւոր գործընկերներից մեկն է ԱՅԿ Երեւանյան գրասենյակի ղեկավար Սերգեյ Կապիտանովը: Այս տարի մշակվեց նաեւ «Արտակարգ ալիքի» հետագա գործողությունների հնգամյա ռազմավարական պլանը, սկսվեց ինտերնետային կայքի վերակառուցման ու զարգացման ծրագիրը: ՄԱԿ-ի հետ համագործակցությունը «Արտակարգ ալիքի» հետ այսօր էլ շարունակվում է:

Շեյքարիայի համագործակցության եւ զարգացման գործա-



կալության (ՇՀԶԳ) հայաստանյան պատասխանատու Սերգեյ Գոլիցինիսյանը նույնպես կարեւորեց արտակարգ իրավիճակներում հանրային իրազեկումը եւ նշեց, որ Շվեյցարիայի Համադաշնությունը շարունակելու է սերտ համագործակցել ՀՀ կառավարության, Արտակարգ ալիքի եւ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի հետ: Մինչ այսօր ՇՀԶԳ-ի հետ համագործակցության արդյունքում հանրապետությունում իրականացվել է «Արձագանք» ծրագիրը, որի շրջանակներում հանրապետության բոլոր մարզերի հրշեջ

իրավիճակների դիմագրավման գործում: ԵԱՀԿ-ի համար կարեւոր է այս համագործակցությունը, որովհետեւ մենք այն եզակի կառույցներից ենք, որի համար անվտանգությունն ու կայունությունը ուղեւնշային հասկացություններ են:

Մեր կողմից հավելվեց, որ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակը 2008 թվականին հոգացել է «Արտակարգ թերթի» տպագրության եւ տարածման ծախսերը: Կազմակերպության աջակցությամբ նաեւ վերսկսվել է «Արտակարգ ալիք» հաղորդաշարի հեռարձակումը, ստեղծվել է հեռուստատեսային նոր տաղավար, մշակվել է իմիջային նոր փաթեթ:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջազգային փորձագետ Նիկո Անտաձեն, հիշելով Սպիտակի երկրաշարժն, ասաց.

- Բնական աղետներին չենք կարող ստիպել չլինել, բայց կարող ենք ունենալ պատրաստվածության եւ իրազեկվածության բարձր աստիճան՝ հետեւանքները մեղմելու համար: Եթե մարդկային կորուստներ չկան, ուրեմն աղետ էլ չկա, - ամփոփեց միջազգային փորձագետը:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը «Արտակարգ ալիքի» երկրամյա գործընկերներից է: Այս ծրագրով են 1999 թվականին կենտրոնին տրամադրվել նկարահանման եւ մոնտաժային սարքեր: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ նաեւ հիմնանորոգվել է Ավանում գտնվող քաղաքապաշտպանության քառահարկ շենքը, որտեղ լրատվականի համար կառուցվել է հինգերորդ հարկ, առանձին հարկաբաժին՝ հեռուստատաղավարով, բրիֆինգ կենտրոնով, համակարգչային սրահով, աշխատասենյակներով: Այս տարի մշակվեց նաեւ «Արտակարգ ալիքի» հետագա գործողությունների հնգամյա ռազմավարական պլանը, սկսվեց ինտերնետային կայքի վերակառուցման ու զարգացման ծրագիրը: ՄԱԿ-ի հետ համագործակցությունը «Արտակարգ ալիքի» հետ այսօր էլ շարունակվում է:

Շեյքարիայի համագործակցության եւ զարգացման գործա-

կալության (ՇՀԶԳ) հայաստանյան պատասխանատու Սերգեյ Գոլիցինիսյանը նույնպես կարեւորեց արտակարգ իրավիճակներում հանրային իրազեկումը եւ նշեց, որ Շվեյցարիայի Համադաշնությունը շարունակելու է սերտ համագործակցել ՀՀ կառավարության, Արտակարգ ալիքի եւ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի հետ: Մինչ այսօր ՇՀԶԳ-ի հետ համագործակցության արդյունքում հանրապետությունում իրականացվել է «Արձագանք» ծրագիրը, որի շրջանակներում հանրապետության բոլոր մարզերի հրշեջ



մասերին տրամադրվել է նոր տեխնիկա եւ կատարվել՝ հրշեջների ուսուցում: Դրան հետեւել է հաջորդ՝ «Հրշեջները համայնքներում» ծրագիրը, որը տեւելու է մինչեւ 2010 թվականը, եւ որի ժամանակ «Արտակարգ ալիքը» սովորեցնում է հրշեջ-փրկարարներին՝ ինչպես աշխատել բնակչության եւ լրատվամիջոցների հետ: Այս ուսուցումն անցած հրշեջ-փրկարարները հետո, զինված տարբեր դիդակտիկ նյութերով վերադառնում են իրենց համայնքներ ու դառնում կենտրոնի անպաշտոն դեսպանները՝ աշխատելով ավելի ու ավելի շատ մարդկանց ներգրավել հանրային իրազեկման գործին:

Գերմանիայի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրեա Վիկտորինը շեշտեց, որ իրենց պետությունը Սպիտակի երկրաշարժից հետո աջակցել է Հայաստանին ու մինչ օրս էլ փորձում է իր ներդրումն ունենալ արտակարգ իրավիճակներին դիմագրավելու ու դրանց պատրաստ լինելու ուղղությամբ տարվող աշխատանքներին: Տիկին դեսպանը մասնավորապես ասաց.



- Կարծում եմ՝ «Արտակարգ ալիքը» հրաշալի մտահղացում է, ու հանդգնած եմ նրա եւ գերմանական զՏԳ-ի համագործակցությունը արդյունավետ կլինի: Մենք միասին ստեղծելու ենք հանրային իրազեկվածության կենտրոններ Տավուշի եւ Լոռու մարզերում:

Ելույթ ունեցավ նաեւ Շվեդիայի փրկարար ծառայությունների գործակալության ներկայացուցիչ Կառուս Գորան Կառլսոնը: Իր զեկույցում նա նշեց, որ մար-



դիկ պետք է տեղեկացված լինեն ոչ միայն բնական խոշոր աղետների, այլեւ կենցաղային դժբախտ պատահարների մասին:

- Սրանք նույնպես մարդկային կյանքեր կարող են խլել, - ասաց նա ու շարունակեց, - «Արտակարգ ալիքը» հրաշալի գաղափար է, այն իսկապես կարող է մարդկային կյանքեր փրկել: Տեղեկացված լինելն ամենակարեւոր բանն է՝ ցանկացած ոլորտում»:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչ Յուկկա Պուկկինը շեշտեց հանրային իրազեկման կարեւորությունը հատկապես արտակարգ իրավիճակներում տուժածներին ճիշտ եւ համակարգված օգնություն ցուցաբերելիս:



- Հատկապես կարեւոր է, որ մարդիկ, հասարակ քաղաքացիներն իրազեկված լինեն, թե ինչպես է պետք ցուցաբերել առաջին բուժօգնությունը. մինչեւ բուժաշխատողների ժամանելը, հարկավոր է ճիշտ օգտագործել առաջին բանկ րոպեները:

Հայկական Կարմիր խաչի գործունեությունը ներկայացրեց աղետների կառավարման բաժնի պետ Էդմոն Ազարյանը: Նա խոսեց երկրաշարժին հետեւած 20 տարիների մասին, որոնցից առաջին 10-ը եղան մարդասիրական, վերականգնողական ու վերակառուցողական ծրագրերի տարիներ, իսկ հաջորդ 10-ը՝ աղետներին նախապատրաստվելու, արձագանքելու, ծրագրեր մշակելու, հանրային իրազեկման

տարիներ: Էդմոն Ազարյանը իրենց գործընկերների շարքում կարեւորեց հատկապես Արտակարգ ալիքի ղեկավար Սերգեյ Կապիտանովին, ՅՅ Փրկարար ծառայության, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության եւ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի դերը:

Վերջում ելույթ ունեցավ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի ղեկավար Նիկոլայ Գրիգորյանը: Անդրադառնալով Սպիտակի երկրաշարժին, նա փաստեց, որ հազարավոր մարդկանց կյանքեր կարելի էր փրկել, եթե աղետի մասին տեղեկատվությունը եւ դրան հետեւող օգնությունը ժամանակին տեղ հասներ:



- 1988-ին Հայաստանի հյուսիսն ամբողջությամբ ավերակների մեջ էր, իսկ Երեւանը աղետից հետո մեկ-երկու օր դեռ անհոգ անգիտության մեջ էր: Իսկ փրկարարներն աշխարհի չորս կողմերից աղետի գոտի հասան միայն երրորդ օրը:

Կոնֆերանսի դաիլիճից դուրս՝ միջանցքում, փակցված էին երկրաշարժի, աղետների, արտակարգ իրավիճակների, Հայաստանի փրկարար ծառայության, «Արտակարգ ալիքի» ու իրազեկված լինելու կարեւորության մասին պատասխաններ, բաժանվում էին նաեւ այլ տպագիր նյութեր: Հատկապես մեծ աշխուժություն էր առաջացել պատին



փակցրած բոյաչափի մոտ: Արտասահմանից հյուրերը հերթով մոտենում, չափում էին իրենց հասակն ու հենց բոյաչափի վրա բարեմադրանք գրում «Արտակարգ ալիքին»:

ԱՆԻ Ստեփանյան





Հայ-շվեյցարական համագործակցություն

Հայաստանում էին Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրենի տեղակալ Էռնեստո Մորոսինը և միջազգային փորձագետ Յելմուտ Շոյերը: Շվեյցարացի հյուրերը հանդիպել են գործակալության երեւանյան գրասենյակի, Հայաստանի Փրկարար ծառայության ղեկավարության, ինչպես նաև «Արձագանք» և «Հրշեջները համայնքներում» ծրագրերի իրականացման աշխատանքային խմբերի հետ: Հանդիպման ընթացքում ՀՀ ԱԻ նախարարության ՀՓԾ տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը, բարձր գնահատելով շվեյցարացիների աջակցությամբ իրականացված ծրագրերը և դրանց ազդեցությունը Հայաստանի գրեթե բոլոր մարզերի վրա, կարևորեց նաև շվեյցարական կողմի հետագա աջակցությունը Փրկարար ծառայությանը՝ նոր

ծրագրերի իրականացման հարցում:
 - Այն աջակցությունը, որ դուք մեզ ցուցաբերել եք, հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ և օպերատիվ աշխատանքներ իրականացնել մասնավորապես հրդեհաշիջման ժամանակ: Ի տարբերություն տարերային և տեխնածին մյուս աղետների, հրդեհի բռնկման դեպքերը հաճախապես են միջին հաշվով օրական 20-30 դեպք է գրանցվում, - ասաց ՀՓԾ տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը:
 - «Հրշեջները համայնքներում» ծրագրի նպատակը՝ հրշեջփրկարարներին հանրային իրազեկման ընդհանուր համակարգի մեջ ներգրավելն է, արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկման, զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքի օգնությամբ նրանց Փրկարար ծառայության հանրության հետ կապերի մի օղակը



դարձնելը: Հրշեջփրկարարները աշխատելով համայնքներում, կկարողանան ոչ միայն մարդկանց օգնել, այլև նրանց փոխանցել ստացած գիտելիքները, նշեց «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի տնօրեն Նիկոլայ Գրիգորյանը:
 Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակա-

լությունը իր պատրաստակամությունն է հայտնել՝ 2009 թվականից աջակցել ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությանը՝ արտակարգ իրավիճակների կառավարման, կանխարգելման և հետևանքների նվազեցման ոլորտում:
 Դեկտեմբերի 7-8-ը Հայաստան են ժամանելու Շվեյցարիա-

յի զարգացման և համագործակցության գործակալության գլխավոր տնօրենի տեղակալ, Մարդասիրական դեպարտամենտի ղեկավար, դեսպան Թոմի Ֆրիշը, Գործակալության եվրոպական և միջերկրական բաժնի ղեկավար Բարբարա Դաթվիլեր-Շոյերը, Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն Դերեկ Մյուլերը, նրա տեղակալ Էռնեստո Մորոսինը, Հայաստանում և Վրաստանում Շվեյցարիայի Համադաշնության դեսպան Լորենցո Ամբերգը: Նրանք Հայաստան են այցելելու՝ Սպիտակի երկրաշարժի 20-ամյա տարելիցի կառավարական միջոցառումներին մասնակցելու նպատակով: Այցի ընթացքում՝ նոր մտեցումների և ծրագրերի հետագա զարգացման հնարավորությունների քննարկման նպատակով նրանք հանդիպելու են Փրկարար ծառայության տարբեր ստորաբաժանումների ղեկավարների հետ:

Արբանյակային կապն արտակարգ իրավիճակներում

Հայաստանի, Ֆրանսիայի և Վրաստանի համագործակցությունը արտակարգ իրավիճակների ոլորտում նաև արբանյակային է: Կողմերի միջև կայացած երկրորդ հեռուստատեսային ասվածի վկայությունն է: Հայաստանից Արտակարգ իրավիճակների նախարարը, Փրկարար ծառայության տնօրենն ու ղեկավար այլ անձինք, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Սերժ Սմեյսովն ու «Քաղաքացիական պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության նախագահ Բեռնար ժանեն, օգտվելով արբանյակային կապի ընձեռած հնարավորությունից, ողջունել են Վրաստանի իրենց գործընկերներին:
 - Նման ծրագրերը տարածաշրջանային համագործակցության ինֆորմացիայի արագ փոխանակման, որոշումների ընդունման և դաշնակցության կազմակերպման հնարավորություն են ընձեռում: Մեր մոտեցումները

հիմնվում են իրագործված և իրագործվող ծրագրերի, դրանց շարունակականության, մասնաթում, - հավաքվածներին ողջունելի խոսքով դիմեց ԱԻ նախարար Սերժ Շահգեղյանը:

Վրաստանն այն երկիրն է, որ 20 տարի առաջ անցավ աղետի միջով: Այս ծրագիրը բարձր են գնահատում, քանի որ հնարավորություն է ընձեռում օպերատիվ միջամտություն ցուցաբերել արտակարգ իրավիճակների ժամանակ, արագ ինֆորմացիա փոխանակել և համակարգել ջանքերը, - հավելեց ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Սերժ Սմեյսովը:
 Հայ-Ֆրանսիական համագործակցությունը տարիների պատմություն ունի, իսկ արբանյակային կապով ուսուցում իրականացնելու եռակողմ պայմանագիրը կնքվել է ավելի քան երկու տարի առաջ: Այդպիսով արբանյակային կապ հաստատվեց 5 քաղաքների՝ Երեւանի, Ստեփանավանի, Թբիլիսիի, Բաթումիի և Մարսելի միջև:
 - Այս ծրագրի հետագա զարգացումը կբերի նրան, որ կստեղծվի վիրտուալ ակադեմիա, որտեղ ուսուցումը կիրականացվի տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների միջոցով: Մենք կարելու ենք աղետների կանխարգելման և կանխման աշխատանքներն ու այս ոլորտում տարածաշրջանային համագործակցությունը: Արբանյակային կապն այս իմաստով լայն հնարավորություններ է տալիս, - ասում է ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար



գիտական որակների բարձրացման վրա: Կարծում են, սա նաև նոր, ավելի խոշոր ծրագրերի իրագործման հիմք կդառնա: Մեզ բոլորիս հաջողություն են մաղ-

- Հայաստանն այն երկիրն է, որ 20 տարի առաջ անցավ աղետի միջով: Այս ծրագիրը բարձր են գնահատում, քանի որ հնարավորություն է ընձեռում օպերատիվ միջամտություն ցուցաբերել արտակարգ իրավիճակների ժամանակ, արագ ինֆորմացիա փոխանակել և համակարգել ջանքերը, - հավելեց ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Սերժ Սմեյսովը:

Համլետ Մաթեոսյանը:
 - Գլխավորն այս նախագծում ուսուցման համար տեղեկատվական ընդհանուր բազայի ստեղծումն է: Ծրագիրը շարունակական է լինելու, հավակնոտ նպատակներ ունենք: Ուզում ենք հասնել նրան, որ արտակարգ իրավիճակներում, ունենանք, օրինակ, տեխնիկայով հագեցած մեքենաներ, որոնք կաշխատեն դեպքի վայրում՝ արբանյակային կապ հաստատելով երեք երկրների հետ՝ միաժամանակ ցուցադրելով, թե ներկա պահին ինչ է կատարվում տեղում, - մանրամասնում է «Քաղաքացիական պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության նախագահ Բեռնար ժանեն:
 Այլ կերպ՝ ֆրանսիացի մասնագետները նպատակ ունեն հայ և վրացի գործընկերների հետ համատեղ ստեղծել այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա տարածաշրջանում իրականացնել արտակարգ իրավիճակների օպերատիվ կառավարում:

Էջր պատրաստեց Նելլի Հարությունյան

Տեղեկատվական ահաբեկություն, թե՛ անիրազեկի իրարանցում

«**<<< 1**» Ձանգահարում էին Երեւանի բոլոր համայնքներից, նույնիսկ մարզերից, անհամազուտ հարցեր տալիս, պահանջում բացատրություններ: Շուտով գործին խառնվեցին լրագրողները, որոնք մեզմից պակաս չգիտեն, որ երկրաշարժն առայժմ, ցավոք, անկանխատեսելի երեւոյթ է.
 - Հասկանում ենք, որ նման կանխատեսման հնարավորություն չկա, բայց այն շատ են անհանգստացնում: Ավելին. այսինչ ու այնինչ դարձում դասերը դադարեցրել ու երեխաներին ուղարկել են տուն, նույնիսկ ինս-

տիտուտներում է խափանվել ուսումնական նորմալ ընթացքը: Մարդիկ հիմնարկներից ու տներից դուրս են փախչում:
 Լուրերը գնալով ավելի խուճապային բնույթ էին ստանում, ալիքն ահագնանում էր:
 Հասկանալով, որ խուճապն արդեն վտանգավոր չափի է հասնում, ԱԻՎ լրատվության կենտրոնն ու օպերատիվ կառավարման վարչությունը գործի անցան:
 ԱԻՎ օպերատիվ կառավարման վարչությունը նամակ-հեռախոսագրեր ուղարկեց բոլոր մարզային ու Երեւանի համայնքային ստորաբաժանումներ,

ինչպես նաև ոստիկանության և անվտանգության ծառայության հեթապահ մասեր: Իրազեկվեցին բոլոր ՁԼԱ-ները, առաջին հերթին՝ հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները, հաշվի առնելով հասարակությանն օպերատիվորեն իրազեկելու նրանց հնարավորությունը: Տրամադրվեց նաև ցանկը այն իրազեկել և իրավասու փորձագետների, որոնք արդեն պատրաստ էին իրենց հեղինակավոր խոսքն ասելու բնակչությանը:
 Ձանգվածային լրատվության միջոցներն իրենց հեռատես ու հավասարակշիռ գործելակեր-

պով կարողացան մարել խուճապը: Երեկոյան արդեն կյանքը մտել էր իր բնականոն հունը, ու շատերն էին իրար հարցնում. «Ախր ո՞նց էինք հավատում այդ լուրերին, ինչ միամիտ ենք...»:

 Եկեք գոնե այսօր միամիտ չլինեք: 21-ը որ շուտով Սպիտակի չկանխատեսված երկրաշարժի 20-րդ տարելիցն է, ողբերգություն, որից պետք է դասեր քաղենք:
 Խուճապ տարածողներն օգտվում են մեր անիրազեկությունից:

Ընդամենը մեկ փաստ, եւ դուք պատկերացում կկազմեք, թե տիեզերական ինչ հեռաստաններում է գտնվում երկրաշարժի կարճաժամկետ կանխատեսումը: Խոշոր գիտնականները մտադրության համար կարելու բոլոր սպասվող հայտնագործությունները համակարգել ու դասավորել են ըստ բարդության, դժվարության ու ժամանակի մեջ հասանելիության աստիճանի:
 Դժվար հասանելիներից նախավերջինը՝ կառավարվող ջերմամիջուկային ռեակցիան է, այսինքն՝ ղեկավարվող ատոմային պայթյունը: Իսկ ամենավերջինն ու անհասանելի երկրաշարժի կարճաժամկետ կանխատեսումն է:



անտիուտոպիա

Ավիկ Ավանեսյան

Բոլոր դռները

(Հնգաչափ տարածության անդունդներում)

Սյորենը հասնում է տուն: Երեկոյան Սառան պատմում է, որ հին ընկերուհին՝ Նորան էր զանգել: Նա ուզում է, որ իրենք տեսնվեն: Սյորենն համոզված է, որ Նորան՝ Անանդի կինը, ինչպես պարզվում է, կարելու բան ունի ասե-

լու, և հորդորում է Սառային՝ անպայման հանդիպել նրան: Սառան էլ նույն կարծիքին է: Իսկ Սյորենն ինքը մեկնում է Կենտրոն, որտեղ սկսում է զրուցել ամենատարեց Փորձագետի՝ Ալեքսանդրի հետ:

Ավիգը՝ 263-267 համարներում

6.

Բեմքի ոչ մի մկանը չէր շարժվել: Հոգնաբեկ աչքերի խորքում այն նույն անհասկանալի ժպիտն էր, որը Սյորենը նկատեց երեկ՝ քոմփյուտերի էկրանից, երբ խոսում էր հետը: Բայց հիմա, չգիտես ինչու, այդ ժպիտը Սյորենին այլևս անտեղի չթվաց:

- Զրուցել միշտ էլ կարելի է, - շարունակեց Ալեքսանդրը...

Մի տեսակ երազկոտ ասաց: Երեկ այդ արտահայտությունն այսպես պիտի ավարտեր՝ լսում եմ քեզ: Կամ այսպես՝ զրույցի օգուտը ի՞նչ է... Բայց չավարտեց: Ասաց ու կտրուկ լռեց:

Սենյակը լցվեց լռությամբ: Դա իսկապես էլ նման էր սովորական մի սենյակի: Չափերով շատ փոքր չէր, բայց ոչ էլ մեծ ու լուսավոր էր, ինչպես կարելի էր սպասել: Չէ որ, ի վերջո, այստեղ տեսք ու ձև էին ստանում կարելու գույնն ուրույններ: Այդ սենյակը կամ աշխատասենյակը մտնողը պիտի կարծեր, որ դրա տերը բոհեմական նկարիչ է կամ էլ՝ հնաժամ իրեր հավաքող, իսկ գուցե՝ երկուսը միասին: Շքեղ գրասեղանն ու բազալթեղ, որի մեջ էլ ընկնում էր Ալեքսանդրը, անտարբեր հարեանություն էին անում գրադարակներում հանգրվանած տարատեսակ ինչ-որ շեքերի, ուղղակի առաստաղից կախված անսովոր չափերի, թե՛ շատ մեծ, թե՛ շատ փոքր, բանալիների, անշրջանակ նկարների ու կարծես կիսատ մնացած մեկ-երկու գորգի հետ: Մի անկյունում նույնիսկ մանրադիտակի նմանվող ինչ-որ իր կար: «Սմ ինչի համար է, այ մարդ»՝ մտածեց Սյորենն ու իսկույն էլ հասկացավ, որ այս դեպքում հարցն անհետեթ է. առավել բնականը մանրադիտակի հետ նույնպես համակերպվելն է: Մանավանդ, որ դա դժվար չէ: Համակերպվեց: Դանդաղ մտեցավ պատերի տակ անկանոն շարված աթոռներից մեկին: Նստեց: Մտքի մեջ գոհության մեկնություն, որ չի նյարդայնանում: Ու ոչինչ, որ պատճառը հոգու խաղաղությունը չէր, խաղաղություն չկար, նույնիսկ հակառակը՝ մի անորոշ տագնապի զգացում, որի հետ հաշտ


ապրելն արդեն սովորություն էր դառնում:

Ինչ արած, ժամանակն իր նշաններն ունի, որոնք մարդիկ են կրելու: Յուրաքանչյուրն՝ իր չափով: Ահա եւ կրում էր: Նահանջելու տեղ չունեի եւ հնչեցրեց հարցը.

- Հարգարժան Ալեքսանդր, որտեղ է Անանդը...

- Պահ, պահ, պահ, - անսպասելիորեն աշխուժացավ Ալեքսանդրը, ամեն «պահի» հետ մի ծափ զարկեց քթի մոտ, դեմքը մի քանի վայրկյանով կենդանացավ ու... ու կրկին խաղաղվեց նույնքան անսպասելիորեն:

- Այդպես միանգամից, այդպես համարձակորեն, - ասաց արդեն լիովին անվրդով ու հատ-հատ արտաբերելով բառերը, - դու քեզ համարձակ մարդ ես համարում, այնպես չէ: Միևնույն քան կարող եմ նաեւ քո ուզած պատասխանը տալ, թե իրականում քո հարցը պատասխան չունի, ինչպես եւ, ի



դեպ, ամեն հարց: Դե ինչ, ես ավելի համարձակ չեմ: Իսկ դու կարող ես խոստովանել, որ հենց այդ պատասխանն էիր ուզում ստանալ, կարող ես...

Սյորենի մտքում առկայծեց ու հանգավ «դասական թատրոն» արտահայտությունը, ինչը հանկարծ որոշակի դարձրեց շրջապատող առարկաների նշանակությունը՝ «Ախ, հա՛, դրանք բեմական դեկորներ են»: Հետո հակված էր կարծելու, որ սխալվել է սենյակը բնորոշելիս. դա ոչ նկարչի, ոչ էլ հավաքողի սենյակ էր, այլ՝ ալքիմիկոսի... Սակայն պարզ չէր, թե ինչից է այդ մարդը փորձում ոսկի ստանալ, ու ի՞նչ է նրա փիլիսոփայական քարը: Ապա հանգեց այն եզրակացության,

որ սենյակն ու այնտեղ գտնվողը պատահականորեն են հանդիպել, ու նրանց միջև ոչ մի կապ գոյություն չունի, ավելին՝ նրանք՝ սենյակն ու մարդը, միմյանց չեն էլ նկատում:

«Բայց, սպասիր, ինչ համարձակություն, ինչ պատասխան ու խոստովանություն»: Այս ամենն իսկապես սկսում էր նմանվել խաղի:

- Այդ ինչ համարձակության մասին ես խոսում, Ալեքսանդր, - Սյորենը փորձեց ընդօրինակել զրուցակցի ոճը, - եւ ես ինչպես կարող եմ որեւէ բան խոստովանել, եթե հարցս մնացել է օդում...

«Կախված» բառն արտաբերելու փոխարեն հայացքը հառեց առաստաղից կախված բանալիներին. դրանք սկսեցին նմանվել հարցերի, որոնք ժամանակի ընթացքում հնչել էին այս սենյակի մեջ, իսկ գուցե նաեւ՝ ոչ միայն այդտեղ, ու հիմա կարծես թեթեւ զնգզնագին՝ զգալով նորեկի գալուստը, որն օդում լող տալով՝ բարձրացավ, բարձրացավ, բանալու մարմին առավ ու հնազանդորեն կախվեց նրանցից մեկի կողքին:

Իսկ Ալեքսանդրը, տեսնելով, որ իր թելադրած խաղի կանոններն ընդունել են, նոր եռանդով շարունակեց.

- Ինչպես, միթե չպատասխանեցի, չի կարող պատահել, այդ հարցն ու իր պատասխանը հնչել են միաժամանակ ու ընդմիշտ: Ենթադրում եմ, չէ, ինչ ենթադրել, տեսնում եմ, որ թատրոն է անցնում մտքով: Թող այդպես լինի, ահա քեզ թատրոն, - Ալեքսանդրը ծանրունեմ վեր կացավ-կանգնեց, մի ձեռքով հենվեց գրասեղանին, մի քիչ կռացավ, կարծես դիմում էր ինչ-որ տեղ՝ վարում գտնվողի, մյուս ձեռքը տնկեց նրա ուղղությամբ ու արդեն լրիվ անթաքույց պաթոսով արտասանեց. «Ալեքսանդր, որտեղ է Անանդը», ասաց ու փոխեց դիրքը. մի քայլ հեռացավ գրասեղանից, իբրեւ թե խոնարհաբար կախեց գլուխն ու խլաձայն մրթմրթաց քթի տակ. «Չգիտեմ, միթե ես նրա պահպանեմ եմ»: Մի պահ լռեց: Ապա նորից ընկնում էր բազալթեղի մեջ եւ փոքրիկ մենախոսությունն ավարտելու համար հայացքը շրջեց դեպի Սյորենը.

- Իսկ որոշ տարբերակներում՝ պահակը, - ասաց, - ուղղակի՝ պահակը: Այս պատասխանն էիր ուզում լսել, այո: Արեւիկն սպանած Կայենի պատասխանը... Դրանից բխող հետեւանքներ, եւ այլն, եւ նման բաներ...

Կրկին լռություն տիրեց: Սյորենը չէր ուզում ընդհատել: Ճիշտ է, այսպիսի զրույց չէ, որ պատկերացրել էր, նույնիսկ պատրաստ էր զարմանալ, սակայն դա ոչինչ չէր տալու, զարմանքը գործողության ավարտ է նախեստաց, միևնույն գործողությունը նոր-նոր սկսվում էր:

- Բայց դրանից բխող ընդամենը մեկ հետեւանք կա, նկատի ունեցիր, - դարձյալ հնչեց Ալեքսանդրի ձայնը, որն այս անգամ կարծես ինչ-որ հեռուներից էր գալիս, - եւ այդ հետեւանքը քաղաքակրթությունն է, մեր քաղաքակրթությունը, ահա սա, - Ալեքսանդրը երկու ձեռքը աջ ու ձախ տարածելով՝ մի շրջան գծեց օդում, - այս ամենը, որն հենց դրանից էլ սկիզբ է առել: Այսինքն՝ եթե չլիներ այդ սպանությունը, չէր լինելու... Այդպես է, թե՛ ոչ, խոսիր, ինչո՞ւ չես խոսում...

- Պարզ է, մեր քաղաքակրթությունը դրանից սկսվել ու դրանով էլ ավարտվում է, այո, չէ որ, մեր քաղաքակրթությունն ավարտվում է, - գրեթե ինքնաբերաբար վրա բերեց Սյորենը, - այդպես հասկանամ քեզ, Ալեքսանդր...

Ալեքսանդրի աչքերում նորից հայտնվեց հեռավոր ժպիտը, որն այս ամբողջ ընթացքում հուսալիորեն թաքնվել էր, որպեսզի իր ուզած պահին նորից հայտնվի: Ժպիտի տերը, ասես հանկարծ մենակ մնաց սենյակում, անխոս թեքվեց դեպի գրասեղանի աջ մասում դրված ստեղծագործ, դաշնակահարի հանդիսավորությամբ մատներն իջեցրեց ստեղծների վրա, հայացքը հառեց քոմփյուտերի մեծ մոնիտորին ու սկսեց դանդաղորեն ինչ-որ տեքստ հավաքել:

Սյորենն էլ Ալեքսանդրին «մոռացավ» մի պահ, ասես խոսքերը մեկ էին արել: Վեր կացավ, հիմա արդեն անտարբեր մի հայացքով ընդգրկեց սենյակի ամբողջ տարածությունն ու դրա «պարունակությունը», ինչ-որ բան հանկարծ հասկացածի պես ձեռքերով շփեց ձակատն ու մոտեցավ պատուհանին:

Սյորենի՝ «Մեր քաղաքակրթությունն ավարտվում է» արտահայտությունը հայտնագոր-

ծություն չէր: Դրա մասին խոսում էին ամենուր: Նույնիսկ ահա այս գործ ու աղոտ պատկերը, որն ամփոփված էր պատուհանի շրջանակում... սա նույնպես քաղաքակրթության ավարտ հուշող խոսակցություն էր: Կամ՝ հիշեցնող: Այս բառը գուցե վիճելի թվա առաջին հայացքից իբր թե՛ իմացած բաներն են հիշում: Բայց մի հանգամանք էլ կա՝ ոչ պակաս գործը. այդ էր մարդը մի կարգին պարզել, թե ինչ գիտի ինքն իրականում: Այս դեպքը՝ վկա. ահա հիշում է, ահա կարծես գիտի, որ իմացածն են հիշում ու ահա էլի ոչ մի կերպ գլխի չի ընկնում, որ իր հիշածը հենց իր իմացածն է: Ինչու: Մենք կանգ կառնենք «հուշողի» վրա ու կկրկնենք, որ ամեն ինչ քաղաքակրթության ավարտ է հուշում: Բայց ինչ ասել է՝ ամեն ինչ: Դա անուն չէ, դա անուն տալուց խուսափելն է: Այդ «ամեն ինչն» էլ պիտի տեսք ունենա, ձեւ ունենա, որ կարողանա մի բան հուշել, որ չմնա զգացումների մակարդակում: Իհարկե, զգացումներն էլ իրավունք ունեն ասելու, բայց մի բան է ավարտի զգացում կամ զգացողություն ունենալը եւ բոլորովին այլ՝ ավարտի պատկերները կամ պատկերը՝ առավել բնորոշ ու ամբողջականը, տեսնելն ու «շոշափելը»:

Այդ պատկերի անունը խցանում է: Խոսքն էլ, անշուշտ, ցամաքային, օդային, ջրային ու տիեզերական երթեւեկության մասին չէ: Կամ՝ ոչ միայն դրա մասին: Դա կարող է տեսնել ուզածը մեկը: Բայց որ խցանվել է «առաջընթաց» կոչվածը՝ բոլորն են ունակ տեսնելու:

Ինչքան ասես, որ չեն գրվել այս ժամանակների մասին, ինչքան ասես, որ չեն տեսել մեր այս ժամանակներում ապագան տեսնող գրողները: Բայց միթե նրանք կարող էին տեսնել ամենազխալվորը՝ այն պատկերը, որն հիմա երեսում է ուղղակի պատուհանից նայելիս. ճանապարհը, որով ընթանում էին, հասցնելու էր մի կետի, որտեղ նույն այդ ճանապարհը «կտրվում-փոկ է գալիս», ինչպես սողանքի ժամանակ, իսկ պռնկին՝ միակ կենսատարածքում, սկսում են կուտակվել, շատանալ ու շատանալ, անվերջորեն, անմտորեն շատանալ, շատանալ ու խցանել... միտքը, զգացմունքը, ճանապարհը, սերը, ատելությունը... խցանել ու որպես ելք՝ շատանալ...

Շարունակելի

առաջին օգնություն



Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը



Այն ընդ ական

«Ատոշիթեթ փրես» գործակալության լուսանկարիչ Էդի Ադամսը մի առիթով ասել է. «Լուսանկարն աշխարհի ամենաուժեղ զենքն է»: 1968 թ. Ադամսը մի լուսանկար է անում, որտեղ զինվորական սպան կրակում է ձեռնաշղթաներով կապկապված կալանավորի գլխին: 1969 թ. հեղինակն այս նկարի համար արժանանում է Պուլիտցերյան մրցանակի: Լուսանկարը վերջնականապես փոխում է ամերիկացիների վերաբերմունքն այդ տարիներին Վիետնամում ծավալվող իրադարձությունների նկատմամբ: Նկարը, հիրավի, շատ մեծ ազդեցություն է թողնում շարքային ամերիկացիների վրա՝ կարեկցանք հարուցելով այնտեղ պատկերված մահապատժի ենթարկվող կալանավորի նկատմամբ: Սակայն իրականում լուսանկարը չի կարելի միանշանակ մեկնաբանել, քանի որ ձեռնաշղթաներով կալանավորը մի վիետնամցի զինվորական կապիտան է, այսպես ասած, «վրե-

ծի մարտիկների» պարագլուխը: Այդ նույն օրը նա, իր զինվորների հետ, բազմաթիվ խաղաղ ու անզեն մարդկանց էր զնդակահարել: Լուսանկարի ձախ կողմում կանգնած գեներալ Նոուեն Նոկ Լուանին անցյալը հետապնդում է ամբողջ կյանքում: Ավստրալիական հոսպիտալում հրաժարվում են նրան բուժել: Գեներալ Լուանը տեղափոխվում է Միացյալ Նահանգներ, որտեղ նրա դեմ զանգվածային քարոզարշավ է սկսում: Մարդիկ պահանջում էին նրան անհապաղ արտաքսել երկրից: Վիրջինիա նահանգում բացված նրա փոքրիկ ռեստորանը գրեթե ամեն օր հարձակման էր ենթարկվում ու ջարդոխուրդ արվում: «Մենք գիտենք, թե դու ով ես» արտահայտությունն անընդհատ հետապնդում էր գեներալ Նոուենին: «Նա ատրճանակով սպանեց ձեռնաշղթաներով մարդուն, իսկ ես սպանեցի նրան իմ տեսախցիկով», - հետագայում ասում էր լուսանկարիչ Էդի Ադամսը:

Շնորհավորում ենք

Վահե Օթարյանը նոյեմբերի 13-18-ը Սանկտ Պետերբուրգում անցկացված սամբո ընթացմարտի աշխարհի առաջնությունում գրավել է 3-րդ տեղը եւ նվաճել բրոնզե մեդալ: Վահեն Տավուշի մարզային փրկարարական վարչությունում է ծառայում 2005 թվականից: Ջոկի հրամանատար է, փ/ծ ենթասպա: Ծնվել է 1983 թվականին: 2001-2003 թթ. ծառայել է 37 զինված ուժերում: Սամբո ընթացմարտով զբաղվում է 1988 թվականից: Սամբո ընթացմարտի բազմաթիվ մրցաշարերի հաղթող է, Յասաստանի չեմպիոն եւ բազմակի մրցանակակիր: 2008 թ. ապրիլին Թբիլիսիում կայացած Եվրոպայի առաջնությանը դարձել է բրոնզե մրցանակակիր:

Բարեխիղճ է, կարգապահ, ունի պարտքի եւ պատասխանատվության զգացում: Համեստ է, վստեղ է եւ շրջապատի սերն ու հարգանքը: Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Կլվկոթ թույներ եւ սննդային թունավորումներ

Առօրյա կյանքում հաճախ են հանդիպում թունավորման անբույր դեպքեր: Երբեմն թունավորումները զարգանում են շատ արագ եւ պահանջում են անհապաղ օգնություն: Մարդու կյանքի համար անհրաժեշտ է սնունդ, սակայն, ցավոք, անորակ սննդի ընդունումը երբեմն կարող է նաեւ դժբախտ պատահարի պատճառ դառնալ:

Կլման ճանապարհով անցնող թույները մարդու օրգանիզմ են թափանցում մարտոդական համակարգի միջոցով: Դրանցից են օրինակ ալկոհոլն ու դեղամիջոցները: Այս խմբի թույները կարող են պարունակվել նաեւ սննդամթերքում, որոշ բույսերի, պտուղների մեջ: Սննդային թունավորումներից ամենատարածվածը մանրէային թունավորումներն են: Թունավորման պատճառ են դառնում սնունդում անկապահով մանրէների արտադրած թունավոր նյութերը: Մանրէային թունավորումներ ավելի հաճախ են հանդիպում ապխտած մսի, երշիկի, ձկնեղենի, կաթնամթերքի, ձվի, տնային պայմաններում պատրաստված պահածոների ընդունման արդյունքում:

Սննդային մանրէային թունավորման դեպքում տուժածի մոտ առաջանում է սրտխառնոց, փսխում, որոնք ուղեկցվում են լուծով: Տուժածը բողբոջում է որովայնի ցավերից, գլխացավից, գլխապտույտից: Նրա մարմնի ջերմաստիճանը կարող է բարձրանալ: Բնականաբար նա ունենում է հիվանդագին տեսք, թույլ է լինում:

Ինչ անել

Կլվկոթ թույներով թունավորման դեպքում ամենաարդյունավետ օգնությունը արհեստական փսխում առաջացնելն է: Դրա շնորհիվ են տուժածի մարտադական համակարգից դեռելս չներծված թույները դուրս բերվում: Արհեստական փսխում առաջացնելու համար տուժածին հարմար նստեցրեք, կողքին ունեցեք որեւէ քաս, որի մեջ նա կարող է փսխել: Տուժածին խմեցրեք 2-3լ գոլ ջուր: Ցանկալի է ջրի յուրաքանչյուր լիտրի մեջ ավելացնել 1 գոլ կերակրի սոդա: Ջուրը խմելուց հետո տուժածի մոտ առաջացրեք փսխում՝ մատով, փայտիկով կամ գդալի պոչով սեղմելով լեզվարմատը: Փսխելիս տուժածի գլուխը պետք է մի քիչ առաջ թեքված լինի: Ցանկալի է փսխման ընթացքում պահել տուժածի գլուխը՝ ձեռքով բռնելով նրա ճակատը (նկար): Երբեք մեջքի վրա պառկած վիճակում տուժածի մոտ փսխում մի՛ առաջացրեք, քանի որ դա կարող է շնչուղիների խցանման պատճառ դառնալ: Փսխումից հետո տուժածը պետք է դողի բերանը: Կրկնեք արհեստական փսխումը 4-5 անգամ:

Թունավորման դեպքում ահազանգեք շտապ օգնություն: Ցանկալի է, որ փսխուք եւ թունավորման պատճառ դարձած նյութը, օրինակ պահածոն, փակած ամառն ուղարկեք հիվանդանոց: Վերահսկեք տուժածի վիճակը, գրանցեք տվյալները եւ ցուցաբերեք համապատասխան ԱՕ:

Բոտոլիզմ

Հատկապես վերջին տարիներին շատացել են խիստ վտանգավոր թունավորման՝ բոտուլիզմի դեպքերը: Բոտուլիզմի դեպքում մահացությունը շատ բարձր է, եւ հաճախ էլ, եթե անգամ մարդը փրկվում է, հաշմանդամ է մնում ողջ կյանքի ընթացքում: Մեր ժողովուրդն այնքան էլ լուրջ չի ընդունում այս թունավորման սպառնալիքը, եւ դրա համար էլ այդ ցավալի դեպքերը չեն նվազում:

Բոտուլիզմի դեպքեր պատահում են տնային պայմաններում պատրաստված պահածոների օգտագործումից, երբեմն նաեւ ապխտած մսից եւ ձկնեղենից: Բոտուլիզմի հարուցիչները միշտ առկա են հողում: Բանջարեղենի, մրգերի հետ նրանք կարող են ընկնել պատրաստվող պահածոյի մեջ: Նկատի ունեցեք, որ անգամ լավ վնասված բանջարեղենի վրա կարող են մնալ հարուցիչներ: Տնային պայմաններում պահածոյի պատրաստման ընթացքում հարուցիչը չի ոչնչանում, քանի որ դրա համար անհրաժեշտ պայմանները հնարավոր է ապահովել միայն գործարաններում: Այսպիսով, բոտուլիզմի հարուցիչն անցնում է պահածոյի մեջ, ուր շատ բարենպաստ պայմաններ են նրա կենսագործունեության համար: Ինքը՝ հարուցիչը վտանգավոր չէ, սակայն իր կենսագործունեության ընթացքում նա արտադրում է շատ ուժեղ թույն՝ բոտուլոտոքսին, որը մարդկությանը հայտնի մանրէային թույներից ամենաուժեղն է:

Հիշեք, որ բոտուլոտոքսին պարունակող մթերքը ոչնչով՝ ոչ համով, ոչ հոտով, ոչ տեսքով չի տարբերվում նորմալից: Սակայն եկեք չանուսենք, որ կա կանխարգելման մի պարզ միջոց: Բավական է օգտագործելուց առաջ 10-15 րոպե եռացնել պահածոյի պարունակությունը, եւ թույնը կչեզոքանա, քանի որ ի տարբերություն բոտուլիզմի հարուցիչի, նրա արտադրած թույնը շատ ջերմազգայուն է:

Բոտուլիզմի նշանները սովորաբար ի հայտ են գալիս բոտուլոտոքսին պարունակող սնունդ ուտելուց 15 րոպեից մինչեւ 2 ժամվա ընթացքում, սակայն կարող են արտահայտվել եւ ավելի ուշ: Թույնի ազդեցությունից տուժածի մեջ առաջանում է մկանների թուլացում: Նա ունենում է ուժեղ գլխացավ, գլխապտույտ, բերանի չորություն: Բնորոշ է, որ տեսողությունը կարող է մշուշված տեսքով լինել, հնարավոր է կոպերի իջեցում, շլություն: Խաթարվում է նրա խոսքը, ծայր խաչադրում է: Դժվարանում է տուժածի շնչառությունը, հատկապես մերշնչումը կատարվում է մեծ դժվարությամբ: Տուժածի որովայնը կարող է փքված լինել: Որոշ դեպքերում նա կարող է ունենալ սրտխառնոց, եզակի փսխում, որովայնի շրջանում ցավեր կամ ծանրության զգացում:

Ինչին ուշադրություն դարձնել

Նշանների ի հայտ գալուն պես՝ անմիջապես ահազանգեք եւ մինչեւ շտապ օգնության ժամանակը առաջացրեք արհեստական փսխում: Ահազանգեք բոտուլիզմով թունավորման անգամ չնչին կասկածի դեպքում կամ հնարավորության դեպքում տուժածին շտապ տեղափոխեք հիվանդանոց՝ սուր թունավորումների կամ վերականգանման բաժանմունք: Նրա հետ հի-

Ինչ անել

Նշանների ի հայտ գալուն պես՝ անմիջապես ահազանգեք եւ մինչեւ շտապ օգնության ժամանակը առաջացրեք արհեստական փսխում: Ահազանգեք բոտուլիզմով թունավորման անգամ չնչին կասկածի դեպքում կամ հնարավորության դեպքում տուժածին շտապ տեղափոխեք հիվանդանոց՝ սուր թունավորումների կամ վերականգանման բաժանմունք: Նրա հետ հի-

Ուշադրություն

Արհեստական փսխում չի կարելի առաջացնել, եթե թույնը քայքայիչ նյութ է կամ նավթային հիմք ունի: Այս դեպքերում թույնի խտությունը նվազեցնելու համար տուժածին մեծ քանակությամբ հեղուկներ տվեք: Կարող եք տալ նաեւ մածուց: Արհեստական փսխում չի կարելի առաջացնել նաեւ այն դեպքերում, երբ տուժածը սրտային հիվանդ է, հղի կին է կամ գտնվում է անզիտակից վիճակում:

վանդանոց տեղափոխեք փսխուքը, կասկածելի կերակրի մուշուները: Հիշեք, բոտուլիզմի դեպքում մահացությունը շատ բարձր է, եւ տուժածին անպայման պետք է տեղափոխել հիվանդանոց: Երբեք մի փորձեք ինքնուրույն բուժել ման թունավորումը:

Ջրազրկում

Սննդային թունավորումների դեպքում տուժածը կարող է ունենալ լուծ եւ փսխում, որոնց հետևանքով հաճախ նկատվում են ջրազրկման երեույթներ: Դա հատկապես վտանգավոր է երեխաների ու տարեց մարդկանց համար:

Տուժածի ջրազրկման մասին է վկայում ծարավի զգացումը, բերանի չորությունը: Ջրազրկված տուժածի անոթազարկը հաճախանում է, թուլանում է մաշկի առաձգականությունը, ծայրը նվաղում է, հնարավոր են ցնցումներ: Այս նշաններից անգամ մեկ-երկուսի ի հայտ գալու դեպքում պետք է շտապ լրացնել հեղուկի եւ աղերի կորուստը: Դրա համար տուժածին տվեք ջրազրկման բուժման համար նախատեսված լուծույթներ, օրինակ ռեհիդրոն, օրալիտ՝ պահպանելով դրանց պատրաստման եւ օգտագործման կանոնները:

Դուք կարող եք նաեւ ինքնուրույն պատրաստել ջրազրկման ժամանակ տրվող հետեւյալ լուծույթը: 3-4 թեյի գդալ շաքար եւ կես թեյի գդալ աղը լուծեք 1 լիտր, այսինքն՝ 4-5 բաժակ ջրում: Ժամը մեկ տուժածին տվեք առնվազն 2 բաժակ այդ լուծույթից: Ցանկալի է տուժածին կես լիտրից ավելի սովորական ջուր տալ:

Կանխարգելում

* Թունավորումները շատ ավելի հեշտ է կանխարգելել, քան օգնել թունավորված տուժածին: Շատ հաճախ երեխաների թունավորման պատճառը մեծահասակների անզուշտությունն է: Եթե դուք հետևեք մեր առաջարկած քայլերին, սպա կնվազեցնեք թունավորման դեպքերը:
 * Տնային պայմաններում պատրաստված պահածոն օգտագործելուց առաջ 10-15 րոպե եռացրեք: Հիշեք, որ պահածոն պատրաստելիս եռացնելն օգուտ չի տալիս, այն պետք է եռացնել օգտագործումից առաջ:
 * Մի՛ օգտագործեք կասկածելի արտադրության սննդամթերք:
 * Թունավոր նյութերը պահեք գործարանային սրվակներում, հակառակ դեպքում այդ նյութերի սրվակների վրա նախազուգահեռող պիտակներ փակցրեք:
 * Մի՛ պահեք թունավոր նյութերը կերակրի համար նախատեսված տուփերի եւ անոթների մեջ:
 * Մի՛ օգտագործեք ժամկետանց դեղորայք:

